ՀՀ, ք. Երևան 0010, Բյուզանդի 1, տարածք 50
Հեռ/Ֆաքս: (374 10) 544587, (374 60) 53 45 87
Էլ. փոստ՝ general@fcm.am
Կայք՝ www.fcm.am

Հաստատված է

«ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ» Սահմանափակ
Պատասխանատվությամբ Ընկերության
մասնակիցների ընդհանուր ժողովում
« 28 » փետրվարի 2019թ.

Ժողովի նախագահ՝ Տ. Խանիկյան

_____
(ստորագրություն)

«ՖՅՈՒՉՐ ԿԱՊԻՏԱԼ ՄԱՐԿԵՏ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(նոր խմբագրությամբ)

ԵՐԵՎԱՆ – 2019

1. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՆՊԱՏԱԿ

1.1. Սույն Կանոնակարգով սահմանվում են «Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայության մատուցման շրջանակներում հաճախորդներին պատկանող արժեթղթերի և/կամ արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների կառավարման կարգն ու պայմանները:

1.2. Սույն Կանոնակարգը մշակված է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք), ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքին, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Սույն Կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

«Արժեթղթերի փաթեթի կառավարում». Փաթեթի կառավարչի կողմից իր տիրապետմանը հանձնված հաճախորդին պատկանող և նրա օգտին կամ նրա կողմից նշված երրորդ անձանց օգտին (շահառու) կառավարչի անունից արժեթղթերի, արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների, արժեթղթերի փաթեթի կառավարման հետևանքով ստացված արժեթղթերի և դրամական միջոցների կառավարումը՝ հաճախորդի կողմից տրված ցուցումների համաձայն:

«Փաթեթի կառավարիչ». Անձ, որն արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն իրականացնում է արժեթղթերի փաթեթի կառավարում՝ ի շահ կառավարման հիմնադրի կամ նրա նշած անձի (շահառուի): Սույն կանոնակարգի առումով փաթեթի կառավարիչ է հանդիսանում «Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ-ն:

«Կառավարիչ». Փաթեթի կառավարչի համապատասխան որակավորում ունեցող աշխատակից, որն Ընկերության կազմում կամ անունից մատուցում է արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայություններ:

«Կառավարման հիմնադիր». Անձ, որն իրեն սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերը և/կամ արժեթղթերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցները (այսուհետ՝ Ակտիվներ) հանձնում է Փաթեթի կառավարչին:

«Շահառու». Անձ, ի շահ որի իրականացվում է փաթեթի կառավարումը: Շահառու կարող է լինել նաև Կառավարման հիմնադիրը: Փաթեթի կառավարիչը չի կարող լինել շահառու:

«Հաճախորդ». Կառավարման հիմնադիր, որի հետ Ընկերությունը կնքել է կամ նախատեսում է կնքել արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագիր:

«Ներդրումային հայտարարագիր». Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող փաստաթուղթ, որն արտացոլում է Կառավարման հիմնադրի Ակտիվների կառավարման ու ներդրման ուղղությունները (ներդրումային ռազմավարությունը), ինչպես նաև ներդրումային պորտֆելի կառուցվածքը:

«Ներդրումային որոշում». Արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում փաթեթում ընդգրկված արժեթղթերով գործարք կատարելու ներքին պատվեր, որը կազմվում է Կառավարչի կողմից և ներկայացվում Ընկերության բրոքերին՝ կատարման նպատակով:

«Պրոֆեսիոնալ հաճախորդ». Հաճախորդ, որն ունի համապատասխան փորձ և գիտելիք ինքնուրույն ներդրումային որոշումներ իրականացնելու և դրանցից բխող ռիսկերը գնահատելու համար:

«Հաշվի օպերատոր». Ըստ Ընկերության «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության» գործող կանոնակարգի սահմանման:

2.2. Սույն Կանոնակարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Ընկերության «Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման» կանոններով սահմանված նշանակությունները:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Փաթեթի կառավարիչն Ակտիվների կառավարումն իրականացնում է արժեթղթերի շուկայում:

3.2. Ակտիվներն արժեթղթերի փաթեթի կառավարման հանձնելը չի հանգեցնում Փաթեթի կառավարչին դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանը:

3.3. Կառավարման հանձնված Ակտիվներն առանձնացվում են Փաթեթի կառավարչի արժեթղթերից և դրամական միջոցներից և պահվում են սույն Կանոնակարգի 10.1. և 10.3. կետերով սահմանված հաշիվների վրա:

3.4. Ակտիվները փաթեթի կառավարման հանձնելը հանգեցնում է արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրով սահմանված ժամկետով Փաթեթի կառավարչին դրանց նկատմամբ օգտագործման և տնօրինման իրավունքի տրամադրմանը, եթե սույն Կանոնակարգով կամ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրով մասնակի կամ ամբողջությամբ չի սահմանափակվում այդ իրավունքներից որևէ մեկը:

3.5. Փաթեթի կառավարիչը կառավարման հանձնված Ակտիվների հետ կապված գործարքները կնքում է իր անունից՝ նշելով, որ ինքը գործում է որպես տվյալ Ակտիվների կառավարիչ: Այդ պայմանը համարվում է պահպանված, եթե գրավոր ձևակերպում չպահանջող գործողությունները կատարելիս Փաթեթի կառավարիչը մյուս կողմին տեղեկացրել է որպես Փաթեթի կառավարիչ՝ դրանք կատարելու մասին, իսկ գրավոր փաստաթղթերում փաթեթի կառավարչի անվանումից հետո արվել է «Փ. Կ.» նշումը:

3.6. Ակտիվներն արժեթղթերի փաթեթի կառավարման հանձնելու համար բավարար հիմք է հանդիսանում գրավոր ձևով կնքված արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագիրը:

3.7. Արժեթղթերի փաթեթի կառավարումն իրականացվում է Ներդրումային հայտարարագրում սահմանված ներդրումային սխեմայի հիման վրա:

3.8. Արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում Փաթեթի կառավարիչը չի խոստանում եկամտաբերության որևէ երաշխավորված մակարդակ:

4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ

4.1. Արժեթղթերի փաթեթի կառավարման օբյեկտ կարող են լինել՝

4.1.1. արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված անկանխիկ դրամական միջոցները.

4.1.2. ՀՀ տարածքում՝ օրենքով սահմանված կարգով թողարկված և շրջանառվող արժեթղթերը, բացառությամբ այն դեպքերի, երբ վերոնշյալ արժեթղթերի թողարկման և/կամ շրջանառության պայմաններով սահմանափակվում է դրանց՝ արժեթղթերի փաթեթի կառավարման օբյեկտ լինելը.

4.1.3. ՀՀ տարածքից դուրս թողարկված և ՀՀ տարածքում՝ օրենքով սահմանված կարգով շրջանառվող արժեթղթերը, բացառությամբ այն դեպքերի, երբ վերոնշյալ արժեթղթերի թողարկման և/կամ շրջանառության պայմաններով սահմանափակվում է դրանց՝ արժեթղթերի փաթեթի կառավարման օբյեկտ լինելը.

4.1.4. ՀՀ տարածքից դուրս թողարկված և շրջանառվող արժեթղթերը, բացառությամբ այն դեպքերի, երբ վերոնշյալ արժեթղթերի թողարկման և/կամ շրջանառության պայմաններով սահմանափակվում է դրանց՝ արժեթղթերի փաթեթի կառավարման օբյեկտ լինելը:

5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ

5.1. Ընկերության կողմից մատուցվող արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայություններով հետաքրքրված լինելու դեպքում Հաճախորդն այցելում է Ընկերության գրասենյակ և պատահականության սկզբունքով դիմում տվյալ պահին աշխատանքով չծանրաբեռնված որևէ Կառավարչի: Ընդ որում, Ընկերության Կառավարիչները փոխադարձ փոխարինելի են. այսինքն՝ այս կամ այն պատճառով (ժամանակավոր անաշխատունակություն, գործուղում, արձակուրդ և այլն) որևէ Կառավարչի՝ աշխատավայրից ժամանակավորապես բացակայելու հետևանքով բացառվում է Հաճախորդին՝ արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման անընդհատության խաթարումը: Նախքան արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի կնքումը և Ակտիվների կառավարումը Կառավարիչը Հաճախորդին է տրամադրում հետևյալ տեղեկատվությունը՝

5.1.1. Ընկերության և նրա կողմից մատուցվող ներդրումային ծառայությունների մասին,

5.1.2. Արժեթղթերի տեսակների և հնարավոր ռիսկերի մասին,

5.1.3. Գործարքի կնքման վայրի (միջոցի) մասին (կարգավորվող շուկա կամ չկարգավորվող շուկա),

5.1.4. Ծառայությունների մատուցման ընթացքում առաջացող ծախսերի և միջնորդավճարների մասին,

5.1.5. ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված այլ տեղեկություններ:

5.2. Սույն Կանոնակարգի 5.1. կետով սահմանված տեղեկությունները Հաճախորդին են ներկայացվում բանավոր կամ ստանդարտ ձևով (գրքույկի կամ բուկլետի տեսքով):

5.3. Հաճախորդի առաջին իսկ պահանջով Կառավարիչը վերջինիս կտեղեկացնի իր՝ որպես արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայություն մատուցող անձի կրթության, աշխատանքային փորձի և Հաճախորդի կողմից կարևորվող այլ ինքնակենսագրական տվյալների մասին:

5.4. Նախքան արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի կնքումը և Ակտիվների կառավարումը Կառավարիչը դասակարգում է Հաճախորդներին՝ որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների մասով, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքների մասով:

5.5. Որպես պրոֆեսիոնալ Հաճախորդ են դասակարգվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 4/07) 14-րդ կետով սահմանված անձինք:

5.6. Հաճախորդի նախաձեռնությամբ Փաթեթի կառավարչի կողմից որպես պրոֆեսիոնալ Հաճախորդ կարող են դասակարգվել սույն Կանոնակարգի 5.5. կետում չնշված այն անձինք, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.

1) Հաճախորդը դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել է 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ

որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ,

2) Հաճախորդի արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,

3) Հաճախորդը ֆինանսական շուկայում ունի առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է հաճախորդին մատուցվող այն ծառայությունների հետ կապված գիտելիքներ, որոնց հետ կապված վերջինս նախաձեռնություն է իրականացնում պրոֆեսիոնալ դասակարգվելու համար:

5.7. Փաթեթի կառավարչի կողմից սույն Կանոնակարգի 5.6. կետում նշված անձանց պրոֆեսիոնալ Հաճախորդի դասակարգումը համարվում է վավեր, եթե Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ Ընկերության կողմից իրականացված գնահատումը հավաստիացնում է, որ Հաճախորդը ներդրումային ծառայություններից օգտվելու, ներդրումային որոշում կայացնելու և դրանց հետ կապված ռիսկերն ընկալելու համապատասխան ունակություն և գիտելիք ունի:

5.8. Սույն Կանոնակարգի 5.7. կետով նախատեսված գնահատումն իրականացվում է Հաճախորդի կողմից «Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ գնահատման հարցաթերթիկ»-ի (այսուհետ՝ Հարցաթերթիկ) լրացմամբ: Հարցաթերթիկում պարունակվող յուրաքանչյուր հարց ունի պատասխանի մի քանի տարբերակ՝ գնահատման զրոյից հինգ միավորներով: Ընդ որում, իրավաբանական անձանց դեպքում, Հարցաթերթիկը լրացվում է իրավաբանական անձի այն ղեկավարի կամ աշխատակցի կողմից, որն իրավասու է իրավաբանական անձի անունից գործարքներ կնքել:

5.9. Սույն Կանոնակարգի 5.8. կետով նախատեսված Հարցաթերթիկի ձևը սահմանված է Ընկերության «Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման» գործող կանոնների Հավելված 1^1-ին համապատասխան:

5.10. Հարցաթերթիկի լրացման արդյունքներով 70 և ավելի միավոր հավաքելու դեպքում Հաճախորդը կդասակարգվի որպես պրոֆեսիոնալ, հակառակ դեպքում՝ որպես ոչ պրոֆեսիոնալ:

5.11. Նախքան պրոֆեսիոնալ Հաճախորդների հետ պայմանագիր կնքելը կամ սույն Կանոնակարգի 5.6. կետում նշված անձանց պրոֆեսիոնալ Հաճախորդ դասակարգելը Ընկերությունն այդ Հաճախորդներին գրավոր տեղեկացնում է այն մասին, որ կանոնակարգ 4/07-ով սահմանված որոշակի պահանջներ չեն գործելու Ընկերության և Հաճախորդի փոխհարաբերություններում՝ ներկայացնելով այդ պահանջների էությունը:

5.12. Սույն Կանոնակարգի 5.6. կետում նշված Հաճախորդները, որոնք ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների մասով, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքներին վերաբերող ծառայության կամ ծառայությունների մասով նախաձեռնել են պրոֆեսիոնալ դասակարգվել, համապատասխան գրավոր հայտարարություն են ներկայացնում Փաթեթի կառավարչին այն մասին, որ.

5.12.1. համաձայն են դասակարգվել որպես պրոֆեսիոնալ Հաճախորդ՝ տվյալ ծառայության կամ գործարքի մասով,

5.12.2. տեղյակ են, որ որևէ ծառայության կամ գործարքի մասով որպես պրոֆեսիոնալ Հաճախորդ դասակարգվելու դեպքում Հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործում իրենց նկատմամբ տվյալ ծառայության կամ գործարքի մասով, և այդ պատճառով իրենք կորցնում են որոշակի պաշտպանվածություն:

5.13. Կառավարիչը կարող է իր՝ որպես պրոֆեսիոնալ դասակարգված Հաճախորդին չտրամադրել սույն Կանոնակարգի 5.1. կետի 5.1.1., 5.1.2. և 5.1.4. ենթակետերով սահմանված տեղեկատվությունը:

5.14. Հաճախորդին՝ որպես պրոֆեսիոնալ դասակարգելու դեպքում Կառավարիչը պարտավոր է համապատասխան գրառում կատարել Հաճախորդի հետ կնքվող արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրում:

5.15. Պրոֆեսիոնալ համարվող Հաճախորդի նախաձեռնությամբ, կամ եթե առկա է Հաճախորդի համաձայնությունը՝ նաև Փաթեթի կառավարչի նախաձեռնությամբ, Փաթեթի կառավարիչը կարող է իր՝ պրոֆեսիոնալ համարվող հաճախորդին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ և տվյալ Հաճախորդի նկատմամբ կիրառել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջները:

5.16. Փաթեթի կառավարիչը պրոֆեսիոնալ Հաճախորդներին դասակարգելիս պարտավոր է այդ Հաճախորդի հետ կնքված պայմանագրում ներառել դրույթ, համաձայն որի պրոֆեսիոնալ համարվող Հաճախորդները պարտավոր են Փաթեթի կառավարչին տեղեկացնել այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել Հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգման վրա: Եթե Հաճախորդի կողմից տրամադրված կամ այլ կերպ Փաթեթի կառավարչին հասանելի դարձած տեղեկատվության հիման վրա Փաթեթի կառավարչի գնահատականով Հաճախորդն այլևս չի բավարարում այն պայմաններին, որոնց հիման վրա դասակարգվել է պրոֆեսիոնալ Հաճախորդ, կամ եթե Փաթեթի կառավարիչը պարզում է, որ Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունները եղել են անարժանահավատ, ապա Փաթեթի կառավարիչն անհապաղ դադարեցնում է Հաճախորդի պրոֆեսիոնալ դասակարգումը, որի մասին 1 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Հաճախորդին:

5.17. Կառավարիչն իր Հաճախորդներին պետք է առաջարկի այնպիսի մեթոդ, որը վերջիններիս հնարավորություն կընձեռի գնահատել և որևէ իմաստալից հենանիշի հետ համեմատել փաթեթի կառավարման արդյունավետությունը (արժեթղթերի փաթեթի եկամտաբերությունը):

5.18. Արժեթղթերի փաթեթի գնահատման սկզբունքները նկարագրված են սույն Կանոնակարգի Հավելված 4-ի 5.2. կետում: Արժեթղթերի փաթեթում ընդգրկված արժեթղթերի շուկայական արժեքների գնահատման հիման վրա՝ Փաթեթի կառավարչի գործադիր տնօրենի կողմից սահմանված ձեռնարկում զետեղված հաշվարկման եղանակների, այդ թվում՝ բանաձևերի շրջանակներում Հաճախորդի ընտրված մեթոդաբանությանը համապատասխան հաշվարկվում է փաթեթի եկամտաբերությունը:

5.19. Իմաստալից հենանիշը պետք է բավարարի հետևյալ պայմաններին միաժամանակ.

ա) պետք է արտահայտի այլընտրանքային ներդրումների եկամտաբերությունը, որը հնարավորություն կտա Հաճախորդին համեմատել կառավարման արդյունավետությունը այլընտրանքային ներդրումների արդյունավետության հետ: Մասնավորապես, իմաստալից հենանիշը պետք է արտահայտի ֆինանսական շուկայում առկա համադրելի այլ գործիքների եկամտաբերությունը, որոնց ժամկետայնությունը, ռիսկը, ներդրման երկիրը և այլ էական բնութագրիչները համապատասխանում են, հնարավորինս մոտ կամ համեմատելի են Հաճախորդի կողմից նշված սահմանափակումներին,

բ) չպետք է հիմնվի Կառավարչի՝ անցյալում ձեռք բերված եկամտաբերության կամ վերջինիս ազդեցության տակ գտնվող ցուցանիշների վրա:

5.20. Իմաստալից հենանիշը կարող է հիմնվել նաև բորսայական ինդեքսների, բանկային ավանդների, այլ կառավարիչների կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման արդյունավետությունն արտահայտող ամփոփ ցուցանիշների, համանման գործիքների որոշակի խմբի համար հաշվարկված միջին եկամտաբերության և նմանատիպ այլ ցուցանիշների վրա:

5.21. Իմաստալից հենանիշը համաձայնեցվում է Հաճախորդի հետ և սահմանվում ներդրումային հայտարարագրում: Իմաստալից հենանիշ սահմանելիս հաշվի են առնվում Հաճախորդի Ակտիվների կառավարման ու ներդրման ուղղությունները, այն արժեթղթերի տեսակները, որոնք կարող են ընդգրկվել փաթեթում և այն գործարքները (ներառյալ սահմանափակումները), որոնք

կարող են իրականացվել փաթեթի կառավարման շրջանակներում: Որպես իմաստալից հենանիշ կարող են հանդես գալ՝

- ՀՀ ԿԲ կողմից հայտարարված վերաֆինանսավորման տոկոսադրույքը
- ՀՀ բանկային համակարգում գործող բանկային ավանդների միջին եկամտաբերության ցուցանիշները՝ ըստ արժույթի և/կամ ժամկետայնության
- Պետական պարտքի տոկոսադրույքները կամ դրանց հիման վրա հաշվարկված միջինացված ցուցանիշները
- Երկիրը, ռեգիոնը կամ ճյուղը բնութագրող բորսայական ինդեքսները
- Երկիրը, ռեգիոնը կամ ճյուղը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշները
- Այլ՝ Հաճախորդի կողմից առաջարկված ցուցանիշ
- Վերոնշյալ ցուցանիշների հիման վրա որոշակի կշիռներով կառուցված համախմբված ցուցանիշ:

5.22. Ի լրումն սույն Կանոնակարգի 5.1. կետով սահմանված տեղեկատվության, Կառավարիչը 5.2. կետով սահմանված կարգով Հաճախորդներին պետք է տրամադրի նաև հետևյալ տեղեկատվությունը՝

1) տեղեկատվություն Հաճախորդի արժեթղթերի փաթեթի արժեքի գնահատման մեթոդի և հաճախականության մասին,
2) այն հենանիշի առանձնահատկությունները, որի հետ պետք է համեմատվի կառավարման արդյունավետությունը (Հաճախորդի արժեթղթերի փաթեթի եկամտաբերությունը),
3) այն արժեթղթերի տեսակները, որոնք կարող են ընդգրկվել փաթեթում և այն գործարքները (ներառյալ սահմանափակումները), որոնք կարող են իրականացվել այդ արժեթղթերով կառավարման շրջանակներում:

6. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

6.1. Կառավարիչը պարտավոր է Հաճախորդից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն ներդրումային գործունեության բնագավառում Հաճախորդի գիտելիքների և փորձի, նրա ֆինանսական վիճակի և ներդրումային նպատակների մասին, որը հնարավորություն կտա Հաճախորդին առաջարկել այնպիսի ներդրումային ռազմավարություն և արժեթղթերի պորտֆել, որոնք առավելագույնս համապատասխանում են Հաճախորդի ցանկությանը: Նշված տեղեկատվությունը չստանալու դեպքում Կառավարիչն իրավունք չունի Հաճախորդին հորդորել որևէ արժեթղթում ներդրում կատարել:

6.2. Ֆինանսական վիճակի մասին տեղեկությունները ներառում են հետևյալը.

1) հաճախորդի կանոնավոր եկամտի աղբյուրները և մեծությունը,
2) ընդհանուր ակտիվները և իրացվելի ակտիվները,
3) ֆինանսական ներդրումները և անշարժ գույքի մասին տեղեկություններ,
4) կանոնավոր ֆինանսական արտահոսքերը:

6.3. Ներդրումային նպատակների մասին տեղեկությունները ներառում են հետևյալը.

1) այն ժամանակահատվածը, որի ողջ ընթացքում Հաճախորդը ցանկանում է պահել այդ ներդրումը,
2) ռիսկերի նկատմամբ իր նախապատվությունը և դրանց շրջանակը,
3) կատարվող ներդրման նպատակը:

6.4. Ներդրումային գործունեության բնագավառում Հաճախորդի գիտելիքների և փորձի մասին տեղեկությունները ներառում են հետևյալը.

1) տեղեկություններ այն ներդրումային ծառայությունների, արժեթղթերով գործարքների և արժեթղթերի մասին, որոնց հետ որևէ կերպ առնչվել է Հաճախորդը,
2) Հաճախորդի կողմից արժեթղթերով կատարված գործարքների բնույթը, ծավալը և հաճախականությունը, ինչպես նաև ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել են այդ գործարքները,
3) Հաճախորդի կրթական մակարդակը, մասնագիտությունները և զբաղմունքը:

6.5. Ընդհանուր առմամբ, Կառավարիչը կարող է հիմնվել Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ, եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք:

6.6. Այն դեպքում, երբ Հաճախորդը չի տրամադրում սույն Կանոնակարգի 6.2., 6.3. և 6.4. կետերով սահմանված տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Կառավարիչը բանավոր զգուշացնում է Հաճախորդին այն մասին, որ վերջինիս նման վարքագիծը թույլ չի տալիս առաջարկել կամ խորհուրդ տալ այնպիսի ներդրումային ռազմավարություն և արժեթղթերի պորտֆել, որոնք առավելագույնս համապատասխանում են Հաճախորդի ցանկությանը:

6.7. Հաճախորդը պարտավոր է իր կողմից ներկայացված տեղեկությունների փոփոխության դեպքում, որոնք հանգեցնում են Հաճախորդի պահանջների փոփոխությանը, տեղեկացնել Կառավարչին՝ փոփոխության մասին տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

7. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

7.1. Արժեթղթերի փաթեթի կառավարումն իրականացվում է արժեթղթերի փաթեթի կառավարման գրավոր պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ Պայմանագիր), որը կնքվում է առավելագույնը հինգ տարի ժամկետով:

7.2. Փաթեթի կառավարիչն իրավունք ունի կնքել Պայմանագիր արժեթղթերի փաթեթի կառավարման հանձնման ենթակա Ակտիվների սեփականատիրոջ կամ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ այլ անձի հետ:

7.3. Մինչև Պայմանագիր կնքելը Կառավարիչը պարտավոր է.
1) Հաճախորդին ընձեռել արժեթղթերի փաթեթի կառավարման գործունեությունը կարգավորող իրավական ակտերին, այդ թվում՝ սույն Կանոնակարգին ծանոթանալու հնարավորություն.
2) Հաճախորդին տեղեկացնել արժեթղթերի ձեռքբերման, հաշվառման, օտարման և դրանցով ամրագրված իրավունքների իրականացման առանձնահատկությունների և դրանց հետ կապված ռիսկերի մասին, ներդրողների պաշտպանության կիրառելի մեխանիզմների մասին (առկայության դեպքում), ինչպես նաև Հաճախորդին տրամադրել ակնկալվող գործարքների հետ կապված ռիսկերի վերաբերյալ տեղեկություններ՝ հաշվի առնելով Հաճախորդի՝ ներդրումների բնագավառում ունեցած փորձը և գիտելիքները, ինչպես նաև կառավարման օբյեկտ հանդիսացող արժեթղթերի գինը և ծավալը.
3) իրականացնել Օրենքով և ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով պահանջվող այլ գործողություններ:

7.4. Պայմանագիրը կազմվում է Կառավարչի կողմից և, Հաճախորդի կողմից վավերացվելուց հետո, ներկայացվում Ընկերության գործադիր տնօրենի հաստատմանը, իսկ մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը՝ Ընկերության գլխավոր հաշվապահին՝ համապատասխան հաշվապահական ձևակերպումներ կատարելու նպատակով: Պայմանագրի երկկողմանի հաստատվելու (ուժի մեջ մտնելու և կողմերի համար պարտադիր դառնալու) պահից 3 աշխատանքային օրվա

ընթացքում Փաթեթի կառավարիչը պետք է ձեռնարկի անհրաժեշտ գործողություններ՝ սույն Կանոնակարգի 10.1. և 10.3. կետերով ստանձնած պարտականությունները կատարելու ուղղությամբ:

7.5. Փաթեթի կառավարիչը Պայմանագրի գործունեության ողջ ժամանակահատվածում իրավունք ունի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման շրջանակներում Հաճախորդից ընդունել Ակտիվներ, բացառությամբ սույն Կանոնակարգի 7.6. կետով սահմանված դեպքերի:

7.6. Եթե Պայմանագրով նախատեսվում է արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման համար հանձնել միայն արժեթղթերի նկատմամբ օգտագործման իրավունքը՝ մասնակի կամ ամբողջությամբ, ապա այս դեպքում Փաթեթի կառավարչին արգելվում է.

1) արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման համար ընդունել արժեթղթերում ներդրման համար նախատեսված դրամական միջոցներ.
2) տնօրինել արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման համար հանձնված արժեթղթերը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

7.7. Եթե Պայմանագրի համաձայն Ակտիվները նախատեսվում է Փաթեթի կառավարչին հանձնել տարբեր ժամկետներում, ապա Պայմանագիրը գործում է միայն փոխանցված Ակտիվների մասով՝ Փաթեթի կառավարչի կողմից դրանք ստանալու պահից:

7.8. Պայմանագրով Հաճախորդի կողմից Փաթեթի կառավարչին հանձնված Ակտիվների կառավարման արդյունքում ստացվող արժեթղթերը և/կամ դրամական միջոցները, առանց Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու, Փաթեթի կառավարչի կողմից ստանալու պահից դառնում են արժեթղթերի փաթեթի կառավարման օբյեկտ, եթե այլ բան սահմանված չէ սույն Կանոնակարգով կամ Պայմանագրով:

7.9. Եթե արժեթղթերի փաթեթի կառավարման են հանձնվում փոխառությամբ վերցրած Ակտիվներ, ապա Պայմանագրի գործողության ժամկետը չի կարող գերազանցել փոխառության ժամկետը:

7.10. Հաճախորդն իրավունք ունի, իր հայեցողությամբ, Պայմանագրի գործունեության ողջ ժամանակահատվածում իրականացնել Ակտիվների մասնակի դուրսբերում՝ Փաթեթի կառավարչին ներկայացնելով գրավոր դիմում (Հավելված 1):

7.11. Սույն Կանոնակարգի 7.10. կետով սահմանված դիմումի ստացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում Փաթեթի կառավարիչը, համադրելով Հաճախորդի ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև իրեն հասանելի նյութերի, ռազմավարական գործընկերների հետ բանակցությունների և այլ հետազոտությունների միջոցով իրականացնելով ֆինանսական շուկայի վերլուծություն ու կանխատեսում, որոշում է կայացնում Հաճախորդի դիմումը բավարարելու մասին՝ գրավոր ծանուցելով Հաճախորդին (Հավելված 2):

7.12. Պայմանագիրը կարող է Հաճախորդի կողմից միակողմանիորեն լուծվել՝ Փաթեթի կառավարչին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով: Պայմանագիրը լուծելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Փաթեթի կառավարիչը պարտավոր է հաճախորդին կամ նրա ներկայացուցչին փոխանցել Հաճախորդին պատկանող արժեթղթերն ու դրամական միջոցները, բացառությամբ այն Ակտիվների, որոնք Փաթեթի կառավարչի՝ երրորդ անձանց հետ կնքված պայմանագրերի ուժով ենթակա են վերադարձման ավելի ուշ ժամկետի ընթացքում. ընդ որում, նշված Ակտիվները վերադարձվում են Հաճախորդին Փաթեթի կառավարչի կողմից դրանք երրորդ անձանցից ստանալուն զուգընթաց, դրանցից յուրաքանչյուրի ստացումից 1 աշխատանքային օրվա ընթացքում:

7.13. Ակտիվների հանձնումը Փաթեթի կառավարչին, ինչպես նաև սույն Կանոնակարգի 7.10. և 7.12. կետերով սահմանված՝ Ակտիվների վերադարձումը Հաճախորդին, իրականացվում է համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող «Ակտիվների հանձնման-ընդունման ակտի» (Հավելված 3):

8. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

8.1. Ներդրումային հայտարարագրի ստորագրմամբ Հաճախորդը տալիս է փաթեթի կառավարման համար անհրաժեշտ ցուցումներ:

8.2. Ներդրումային հայտարարագրի դրույթները պարտադիր են Փաթեթի կառավարչի կողմից Պայմանագրի մյուս դրույթների հետ հավասար հիմքերով պատշաճ կատարման համար: Փաթեթի կառավարիչը չի կարող ձեռնարկել ներդրումային հայտարարագրին հակասող գործողություններ:

8.3. Ներդրումային հայտարարագիրը կազմվում է համաձայն Հավելված 4-ի և պետք է պարունակի՝

1) արժեթղթերի փաթեթի կառավարման ուղղությունները և նպատակը, որոնք բխում են հաճախորդի ներդրումային ռիսկերը կրելու ցանկության և կարողության աստիճանից.
2) ձեռքբերման ենթակա արժեթղթերի կազմի և կառուցվածքի սահմանափակումները (տարբեր տեսակի արժեթղթերի միջև հարաբերակցությունը):

8.4. Ներդրումային հայտարարագրի գործողության ժամկետի ավարտից հետո Պայմանագրի կողմերից որևէ մեկի կողմից հայտարարագրի փոփոխման վերաբերյալ գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում տվյալ ներդրումային հայտարարագրի գործողության ժամկետը համարվում է երկարաձգված մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:

8.5. Ներդրումային հայտարարագրի գործողության ժամկետի սահմանումը չի կարող արգելք հանդիսանալ նշված ժամկետի ընթացքում դրանում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու, այդ թվում՝ որոշակի ժամկետով այն կասեցնելու կամ դադարեցնելու համար, եթե նման գործողությունները բխում են հաճախորդի (անհրաժեշտության դեպքում՝ նաև շահառուի) շահերից:

8.6. Հաճախորդն իր անձնական վիճակից ելնելով, ինչպես նաև սեփական ուսումնասիրությունների հիման վրա՝ կարող է պահանջել Ներդրումային հայտարարագրի վերանայում:

8.7. Ներդրումային հայտարարագրում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարվում են լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կցվում է Պայմանագրին:

9. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

9.1. Փաթեթի կառավարիչը պարտավոր է տեղեկացնել Հաճախորդին այն մասին, որ արժեթղթերում ցանկացած ներդրում իր բնույթով հանդիսանում է ռիսկային: Արժեթղթերի շուկայում գործունեության ընթացքում «ռիսկ» հասկացությունը ենթադրում է որոշակի դեպքերի, իրավիճակների կամ գործընթացների ի հայտ գալու հավանականություն, որոնք հանգեցնում են կամ կարող են նպաստել Հաճախորդի Ակտիվների կորստի:

9.2. Արժեթղթերի շուկայում ներդրումների փորձն ու փորձառությունը կարևոր են, բայց չեն երաշխավորում ապագայում դրական ֆինանսական արդյունքներ: Այլ անձանց ֆինանսական հաջողությունները նույնպես չեն երաշխավորում նմանատիպ արդյունք Հաճախորդի համար: Հնարավոր բոլոր ռիսկերի գնահատման և ներդրումային ռազմավարության ընտրության ողջ պատասխանատվությունը կրում է Հաճախորդը:

9.3. Արժեթղթերի շուկայում գործարքներ կատարելիս Փաթեթի կառավարիչն առնչվում է հետևյալ ռիսկերի հետ.

<u>**Ֆինանսական գործիքների գների փոփոխության ռիսկ**</u>. արժեթղթերի շուկայական գները և դրանց փոփոխությունները չեն գտնվում Փաթեթի կառավարչի հսկողության տակ: Նշված

պատճառով արժեթղթերում ներդրման դեպքում հնարավոր է նաև Հաճախորդի պորտֆելի արժեքի նվազում, ընդհուպ մինչև ամբողջ պորտֆելի կորուստը:

<u>Վճարունակության ռիսկ.</u> արժեթղթի թողարկողի կողմից իր պարտականությունների չկատարման և դրա հետ կապված Հաճախորդի կորուստների ռիսկ (դեֆոլտ, արժեթղթի թողարկողի անվճարունակություն և այլն):

<u>Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ.</u> ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույքի անցանկալի փոփոխությունն ուղղակիորեն կազդի Հաճախորդի ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի վրա՝ կրճատելով պորտֆելի իրական արժեքը:

<u>Արտարժութային ռիսկ.</u> ծագում է այն հավանականությունից, որ արտարժույթի փոխարժեքը կփոխվի այնպես, որ Հաճախորդի արտարժույթով գնանշվող արժեթղթերի՝ ՀՀ դրամով արտահայտված գինը փոխվի Հաճախորդի համար անշահավետ ձևով:

<u>Իրացվելիության նվազման ռիսկ.</u> այս ռիսկը կապված է տվյալ գործիքի նկատմամբ շուկայի այլ մասնակիցների հետաքրքրության նվազման հետ, ինչի արդյունքում կոնկրետ պահին հնարավար չի լինի արժեթուղթը վաճառել Հաճախորդի համար ձեռնտու գնով:

<u>Պետության կամ քաղաքական ռիսկ.</u> հավանականություն, որ այն պետությունում, որտեղ գրանցված կամ պահվում են Հաճախորդի արժեթղթերը, տեղի կունենան իրադարձություններ (ռազմական գործողություններ, ընկերությունների ազգայնացում և այլն), որոնք կազդեն տվյալ պետության քաղաքական կամ տնտեսական կայունության վրա, և որոնց արդյունքում Հաճախորդը կարող է կրել էական վնասներ՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն կորցնելով իր պորտֆելը:

<u>Օրենսդրության փոփոխության ռիսկ</u>. այս ռիսկը կապված է պետական իշխանության մարմինների և շուկաները կարգավորող այլ մարմինների գործողությունների հետ (նոր օրենսդրական ակտերի ընդունում, գործող նորմատիվ-իրավական ակտերի փոփոխություն), որի հետևանքով Հաճախորդը կարող է կրել զգալի կորուստներ:

<u>Էլեկտրոնային առևտրային համակարգերի օգտագործման հետ կապված ռիսկեր</u>. այս ռիսկերը կապված են համակարգչային սարքավորումների, ծրագրային ապահովման անսարքության առաջացման, էլեկտրասնուցման, կապի ընդհատումների և այլնի հետ, որոնք կարող են նպաստել Հաճախորդի ակտիվների կորուստների:

<u>Այլ ռիսկեր</u>. վերը թվարկված ռիսկերի ցանկը սպառիչ չէ, քանի որ արժեթղթերի փաթեթի կառավարումը կարող է ուղեկցվել նաև այլ ռիսկերով:

9.4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռիսկը շուկայի օբյեկտիվ իրականությունն է, նրանից չի կարելի խուսափել, ուստի Ընկերությունը կարևորում է ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ ունենալու հանգամանքը, որի նպատակն է կանխատեսել և հնարավորինս կանխել և/կամ նվազեցնել Ընկերության և Հաճախորդների ռիսկերը՝ դրանց հետևանքները վերացնելու փոխարեն: Այս առումով Ընկերությունն իրականացնում է ռիսկերի կանխարգելմանն ուղղված հետևյալ հիմնական միջոցառումները.

9.4.1. Թողարկողների մանրամասն վերլուծություն (առաջին հերթին Ընկերությունն ուշադրություն է դարձնում հետևյալ գործոնների առկայությանը՝ եռանդուն և վճռական կառավարիչների արհեստավարժ թիմ, ռազմավարության հստակ պատկերացում և մանրամասն գործարարության ծրագիր (բիզնես-պլան), շուկայում առաջատար դիրքեր գրավելու ներուժ, ֆինանսական ցուցանիշներ, սպառողական պահանջարկի բավարարման լայն հնարավորություններ, թափանցիկություն և կորպորատիվ կառավարման սկզբունքների պահպանում և այլն).

9.4.2. Ներդրումային պորտֆելի դիվերսիֆիկացիա.

9.4.3. Արժեթղթերի փաթեթի կառավարման հետ կապված ռիսկերի անընդհատ մոնիտորինգ և Հաճախորդին անհապաղ տեղեկացում մոնիտորինգի արդյունքում ռիսկերի վերաբերյալ բացահայտված ցանկացած փոփոխության կամ հնարավոր

փոփոխության (այդ թվում՝ ռիսկերի նոր տեսակներ ի հայտ գալու) մասին, որը կարող է գերազանցել հաճախորդի ներդրումային ռիսկերը կրելու ցանկության և կարողության աստիճանը.

9.4.4. Առկա և պոտենցիալ Հաճախորդներին իրազեկում բարձր հուսալիությամբ և եկամտաբերությամբ բնութագրվող ներդրումային նախագծերի վերաբերյալ:

9.5. Արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայություններ մատուցելու արդյունքում առաջացող հնարավոր ռիսկերի վերլուծությունը (բացահայտումը, գնահատումը և վերահսկումը) Ընկերության ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման անբաժանելի մասն է հանդիսանում:

10. ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

10.1. Փաթեթի կառավարիչը պարտավոր է արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայության շրջանակներում ընդունված դրամական միջոցները հաշվառել իր միջոցներից առանձին: Հաճախորդի կողմից Փաթեթի կառավարչին դրամական միջոցների փոխանցումն իրականացվում է Փաթեթի կառավարչի կողմից այդ նպատակի համար բացված առանձին բանկային հաշվի վրա՝ փոխանցման միջոցով:

10.2. Հաճախորդների դրամական միջոցների համար բացված սույն Կանոնակարգի 10.1. կետով սահմանված բանկային հաշվի պայմանագիրը պետք է հստակ նշում պարունակի այն մասին, որ այդ բանկային հաշիվը նախատեսված է Փաթեթի կառավարչի Հաճախորդների դրամական միջոցների հաշվառման համար:

10.3. Փաթեթի կառավարիչը պարտավոր է կառավարման համար փոխանցվող կամ կառավարման արդյունքում ձեռք բերված արժեթղթերի հաշվառման և վարման համար իր կամ արժեթղթերի որևէ պահառուի մոտ բացել արժեթղթերի հաշիվ, որը նախատեսված կլինի կառավարման ընդունված արժեթղթերի փաստացի հաշվառման համար:

10.4. Փաթեթի կառավարիչն իր մոտ կառավարման ընդունված արժեթղթերի փաստացի հաշվառման համար արժեթղթերի հաշիվ բացելիս գործում է որպես Հաշվի օպերատոր՝ առաջնորդվելով Ընկերության «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի անդամի գործունեության» գործող կանոնակարգով:

10.5. Արժեթղթերի պահառուի մոտ կառավարման հանձնված արժեթղթերը պետք է հաշվառվեն Կառավարման հիմնադրի (շահառուի) անունով բացված արժեթղթերի հաշվի համապատասխան բաժնում:

10.6. Կառավարման հանձնված արժեթղթերը Կառավարման հիմնադրի (շահառուի) արժեթղթերի հաշվում հաշվառելու դեպքում Հաճախորդը լիազորում է Փաթեթի կառավարչին՝ տնօրինելու հաշվում առկա արժեթղթերը, ուստի վերջինս հանդես է գալիս որպես լիազոր ներկայացուցիչ՝ պահառուի ներքին կանոններով սահմանված կարգով պահառուի մոտ ունենալով լիազոր ներկայացուցչի քարտ: Ընդ որում՝ լիազոր ներկայացուցչի քարտում պետք է նշում կատարվի, որ լիազոր ներկայացուցիչը հանդես է գալիս որպես Փաթեթի կառավարիչ:

10.7. Հաճախորդի կողմից Փաթեթի կառավարչին արժեթղթերի փոխանցումն իրականացվում է սույն Կանոնակարգի 10.3. կետով սահմանված արժեթղթերի հաշվի վրա փոխանցման միջոցով:

10.8. Փաթեթի կառավարչի կողմից դրամական միջոցները ստացված են համարվում սույն Կանոնակարգի 10.1. կետով սահմանված բանկային հաշվին փոխանցման պահից:

10.9. Փաթեթի կառավարչի կողմից արժեթղթերը ստացված են համարվում սույն Կանոնակարգի 10.3. կետով սահմանված արժեթղթերի հաշվին փոխանցման պահից:

10.10. Փաթեթի կառավարչին Պայմանագրի շրջանակներում հանձնման ենթակա Ակտիվների առաջնային մուտքի նվազագույն չափ է սահմանվում 100 մլն. ՀՀ դրամը:

10.11. Առանձին դեպքերում սույն Կանոնակարգի 10.10. կետով սահմանված նվազագույն չափը կարող է վերանայվել Փաթեթի կառավարչի գործադիր տնօրենի որոշմամբ:

10.12. Կառավարման հիմնադիրը կարող է կառավարման համար տրամադրել լրացուցիչ Ակտիվներ Պայմանագրի գործունեության ողջ ժամկետում՝ «Ակտիվների հանձնման-ընդունման ակտի» համաձայն:

11. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

11.1. Պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում Կառավարիչն արժեթղթերի փաթեթում ընդգրկված արժեթղթերի վերաբերյալ կազմում է ներդրումային որոշումներ, որոնց հիման վրա կազմված պատվերները ներկայացվում են Փաթեթի կառավարչի բրոքերին՝ ի կատարումն: Պատվերը բրոքերին է ներկայացվում առձեռն կամ Կառավարչի և բրոքերի միջև համաձայնեցված կապի այլ միջոցներով (պատվերների ներկայացում գրավոր և ոչ գրավոր ձևով):

11.2. Կառավարիչն իրավունք չունի համախմբել իր Հաճախորդի արժեթղթերի փաթեթում ընդգրկված արժեթղթի վերաբերյալ կազմված ներդրումային որոշումն իր մեկ այլ Հաճախորդի արժեթղթերի փաթեթում ընդգրկված՝ միևնույն դասի արժեթղթի վերաբերյալ կազմված ներդրումային որոշման հետ:

11.3. Սույն Կանոնակարգի 11.2. կետով սահմանված ներդրումային որոշումների հիման վրա կազմված պատվերները կարող են համախմբվել և կատարվել համախմբված եղանակով Փաթեթի կառավարչի բրոքերի կողմից, եթե՝

ա) որևէ Հաճախորդի համար այն չի ապահովում ավելի վատ արդյունք, քան այն դեպքում, եթե պատվերները կատարվեին առանձին-առանձին և

բ) այն բխում է Հաճախորդների շահերից:

11.4. Եթե Փաթեթի կառավարիչն իր Հաճախորդի պատվերը համախմբում է իր հաշվին կատարվող գործարքի հետ, ապա համախմբված պատվերի մասնակի բավարարման դեպքում նախապատվությունը տրվում է Հաճախորդին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

11.5. Կառավարչի կողմից պատվերը ներկայացվում է մեկ օրինակից, որը «Պատվերն ընդունված է» նշագրմամբ և բրոքերի ստորագրությամբ գործարքը կնքելուց անմիջապես հետո վերադարձվում է Կառավարչին և Պայմանագրի հետ միասին կարվում Հաճախորդի անունով բացված առանձին թղթապանակում:

11.6. Պատվերների ներկայացման, դրանցում փոփոխությունների կատարման, գործարքի վավերագրի ձևին, դրա ներկայացման կարգին, ինչպես նաև պատվերների և վավերագրերի գրանցման նկատմամբ պահանջները սահմանվում են Ընկերության «Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման» գործող կանոններով:

11.7. Կարգավորվող շուկայից դուրս իրականացված գործարքների դեպքում Կառավարչի կազմված ներդրումային որոշումների հիման վրա պատրաստված պատվերները, առք-վաճառքի կամ ռեպո և/կամ այլ համաձայնագրերը Կառավարչի կողմից ներկայացվում են Ընկերության գործադիր տնօրենի հաստատմանը:

11.8. Ընկերության գործադիր տնօրենի կողմից կնքվելուց հետո մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը սույն Կանոնակարգի 11.7. կետով սահմանված համաձայնագրերը Կառավարչի կողմից ներկայացվում են Ընկերության գլխավոր հաշվապահին՝ համապատասխան հաշվապահական ձևակերպումներ կատարելու նպատակով:

12. ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

12.1. Փաթեթի կառավարչին արգելվում է.

1) արժեթղթերի փաթեթի կառավարման գործունեությունը կարգավորող կանոնների պահանջների, ինչպես նաև Պայմանագրի դրույթների խախտմամբ գործունեություն իրականացնել, այդ թվում՝ կնքել և կատարել գործարքներ.
2) արժեթղթերի փաթեթի կառավարման համար ընդունել արժեթղթեր, որոնք ՀՀ գործող օրենսդրության համաձայն չեն կարող լինել արժեթղթերի փաթեթի կառավարման օբյեկտ.
3) արժեթղթերի փաթեթի կառավարման համար ընդունված դրամական միջոցներով ձեռք բերել լուծարման գործընթացում գտնվող, այդ թվում՝ սնանկ ճանաչված իրավաբանական անձանց կողմից թողարկված արժեթղթեր.
4) արժեթղթերի փաթեթի կառավարման համար ընդունված արժեթղթերը գրավ դնել կամ դրանցով ապահովված երաշխիքներ տալ առանց հաճախորդի հետ կնքված գրավոր համաձայնության.
5) արժեթղթերի փաթեթի կառավարման համար ընդունված Ակտիվները ցանկացած կերպ օգտագործել ի շահ իրեն և/կամ երրորդ անձի օգտին կամ դրանց տնօրինման իրավունքը պատվիրակել երրորդ անձի, եթե այլ բան սահմանված չէ Պայմանագրով:

12.2. Փաթեթի կառավարիչը Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցում է նաև երրորդ անձանց, որի արդյունքում Փաթեթի կառավարչի և Հաճախորդի, ինչպես նաև Փաթեթի կառավարչի տարբեր հաճախորդների միջև կարող է առաջանալ շահերի բախում:

12.3. Պայմանագրի շրջանակներում Փաթեթի կառավարչի և Հաճախորդի շահերի բախումը կանխելու և հնարավոր բացասական արդյունքները նվազեցնելու նպատակով Փաթեթի կառավարիչն իր մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում պարտավորվում է պահպանել իր շահերի նկատմամբ Հաճախորդի շահերի գերակայության սկզբունքը:

12.4. Փաթեթի կառավարչի տարբեր հաճախորդների միջև շահերի բախումը կանխելու և հնարավոր բացասական արդյունքները նվազեցնելու նպատակով Փաթեթի կառավարիչն իր մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում պարտավորվում է պահպանել հաճախորդների նկատմամբ հավասարության և արդարության սկզբունքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր հաճախորդի հետ կնքված պայմանագրով և ներդրումային հայտարարագրով սահմանված պայմանները:

12.5. Փաթեթի կառավարչի կողմից իր հաշվին գործարքներ կատարելիս հաճախորդի շահերից և ներդրումային հայտարարագրի պահանջներից բխող արժեթղթերի փաթեթի կառավարման համար ընդունված Ակտիվներով կատարվող գործարքները ենթակա են առաջնահերթ կատարման:

12.6. Հաճախորդների հաշիվներով գործարքներ իրականացնելիս Փաթեթի կառավարիչը պետք է գործարքներն արդար ձևով բաշխի այնպես, որ որոշ հաճախորդներ չստանան արտոնյալ վերաբերմունք և չստացվի այնպես, որ նրանց հաշիվներով գործարքներն իրականացվում են առաջին հերթին: Արժեթղթերում ներդրումներ իրականացնելիս Փաթեթի կառավարիչը պետք է ապահովի, որ մասնակցության հնարավորություն ընձեռվի այն բոլոր հաճախորդներին, որոնց համար տվյալ արժեթուղթը նպատակահարմար է և/կամ նախատեսված է ներդրումային հայտարարագրով: Եթե Փաթեթի կառավարչի ձեռք բերված արժեթղթերի ծավալն այնքան մեծ չէ, որ ապահովվի բոլոր հաճախորդների լիարժեք մասնակցությունը տվյալ առաջարկում, ապա վերջինս պետք է արժեթղթերում ներդրումներ կատարի համամասնորեն՝ ըստ

յուրաքանչյուր հաճախորդի համար կազմված ներդրումային որոշման մեջ պարունակվող համապատասխան արժեթղթի ծավալի (քանակի):

13. ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ

13.1. Պայմանագրով նախատեսված՝ փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման դիմաց Կառավարման հիմնադիրը վարձատրում է Փաթեթի կառավարչին՝ համաձայն վերջինիս կողմից հաստատված սակագների (պարգևավճարի հաշվարկման կարգը ներկայացված է Հավելված 5-ում):

13.2. Փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման դիմաց Կառավարման հիմնադրից գանձվող պարգևավճարի հաշվարկման կարգը հրապարակվում է Փաթեթի կառավարչի՝ www.fcm.am ինտերնետային կայքում:

13.3. Պարգևավճարը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրվա և/կամ Պայմանագրի դադարեցման օրվա դրությամբ, և վճարվում է Պայմանագրով սահմանված ժամկետում:

13.4. Պարգևավճարը, ինչպես նաև Փաթեթի կառավարչի կողմից կատարված՝ փաթեթի կառավարման ծառայություններին առնչվող բոլոր այլ անհրաժեշտ ծախսերը, Կառավարման հիմնադրի կողմից փոխանցվում են Փաթեթի կառավարչի կողմից նշված դրամական հաշվին կամ Փաթեթի կառավարչի կողմից անակցեպտ հիմունքներով գանձվում են Կառավարման հիմնադրի Ակտիվներից:

14. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

14.1. Փաթեթի կառավարիչը պարտավոր է ցանկացած պահին հաճախորդի պահանջով, ինչպես նաև յուրաքանչյուր եռամսյակի համար իր հաճախորդին էլեկտրոնային փոստով, փոստով կամ առձեռն տրամադրել արժեթղթերի փաթեթի կառավարման մասին հաշվետվություն, որն առնվազն պետք է ներառի.

1) Փաթեթի կառավարչի անվանումը,
2) հաճախորդի արժեթղթերի կառավարման նպատակով բացված հաշվի նույնականացնող համարը,
3) հաշվետու ժամանակաշրջանի սկզբում և վերջում՝
   ա. փաթեթում ընդգրկված արժեթղթերի ցանկը և փաթեթի արժեքը, ներառյալ փաթեթում ընդգրկված յուրաքանչյուր արժեթղթի իրական արժեքը,
   բ. հաճախորդի դրամական միջոցների հաշվեկշիռը,
4) արժեթղթերի փաթեթի տարեկան եկամտաբերությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում,
5) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գանձվող վճարները՝ տալով դրանց բացվածքն առնվազն ըստ կառավարման դիմաց գանձվող վճարի և գործարքների կնքման համար կատարված ծախսերի,
6) կառավարման եկամտաբերության համեմատումը հաճախորդի հետ նախապես համաձայնեցված հենանիշի հետ (նման հենանիշի առկայության դեպքում),
7) հաշվետու ժամանակաշրջանում արժեթղթերի փաթեթում ներառված արժեթղթերի գծով ստացված շահութաբաժինները, տոկոսները և այլ վճարները,
8) արժեթղթերի փաթեթում ներառված արժեթղթերի գծով կորպորատիվ գործողությունները (արժեթղթերի փոխարկումը՝ թողարկողի տվյալ դասի արժեթղթերի բաժանման, կոնսոլիդացիայի կամ թողարկողի վերակազմակերպման արդյունքում):

14.2. Սույն Կանոնակարգի 14.1. կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Հավելված 6-ին համապատասխան:

14.3. Սույն Կանոնակարգի 14.1. կետով սահմանված հաշվետվությունը տրամադրվում է Հաճախորդի պահանջը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում (պահանջի առկայության դեպքում), ինչպես նաև մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը:

14.4. Ի լրումն սույն Կանոնակարգի 14.1. կետով սահմանված հաշվետվության, Փաթեթի կառավարիչը պարտավոր է իր հաճախորդին էլեկտրոնային փոստով, փոստով կամ առձեռն տրամադրել նաև հաշվետվություն արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում կնքված յուրաքանչյուր գործարքի մասին՝ մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը՝ Հավելված 7-ին համապատասխան:

14.5. Սույն Կանոնակարգի 14.2. և 14.4. կետերով սահմանված՝ Հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունները պետք է ներառեն նաև հետևյալ տեղեկությունները՝

1) Հաշվետվության ներկայացման ամսաթիվը.
2) Փաթեթի կառավարչի անվանումը և կազմակերպական-իրավական տեսակը.
3) Փաթեթի կառավարչի գործադիր տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը (թղթային եղանակով հաշվետվության տրամադրման դեպքում)
4) Պետք է վավերացված լինեն Փաթեթի կառավարչի կնիքով (թղթային եղանակով հաշվետվության տրամադրման դեպքում):

14.6. Այն դեպքում, երբ Հաճախորդին հաշվետվություններն ուղարկվում են էլեկտրոնային փոստի միջոցով, ապա դրանց ներկայացման պահ է համարվում Փաթեթի կառավարչի էլեկտրոնային փոստի ելքային նամակագրության բաժնում տվյալ հաշվետվության՝ որպես ուղարկված նամակ գրանցման պահը:

14.7. Այն դեպքում, երբ Հաճախորդին հաշվետվություններն ուղարկվում են փոստով, դրանց ներկայացման պահ է համարվում փոստային ծառայության կողմից տրված անդորրագրի վրա նշված ամսաթիվը: Անդորրագիրը կցվում է հաշվետվության՝ Փաթեթի կառավարչի օրինակին և կարվում «Հաճախորդներին տրամադրվող հաշվետվություններ» թղթապանակում:

14.8. Առձեռն եղանակով տրամադրվող հաշվետվությունները Հաճախորդին են տրվում երկու օրինակից: Հաճախորդը պարտավոր է ստորագրել յուրաքանչյուր հաշվետվության մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ստացել է դրանք: Ստորագրված օրինակը վերադարձվում է Փաթեթի կառավարչին և կարվում «Հաճախորդներին տրամադրվող հաշվետվություններ» թղթապանակում: Հաճախորդի կողմից հաշվետվության՝ Փաթեթի կառավարչի օրինակի վրա ստորագրելու պահը հանդիսանում է հաշվետվության ներկայացման պահ:

14.9. Փաթեթի կառավարչի լիցենզիայի դադարեցումը հիմք չէ հաշվետվությունը հաճախորդին չտրամադրելու համար: Փաթեթի կառավարչի լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում բացառապես Օրենքով սահմանված կարգով:

15. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

15.1. Փաթեթի կառավարիչը պարտավոր է վարել փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման շրջանակներում կազմված ներդրումային որոշումների գրանցամատյան, որում գրանցումները պետք է կատարվեն ներդրումային որոշման կայացման պահից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը:

15.2. Ներդրումային որոշումների գրանցումներն առնվազն ներառում են հետևյալ տեղեկությունները՝

1) հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը),
2) որոշման մեջ նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),

3) որոշման բնույթը, եթե որոշման մեջ նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),
4) որոշման համաձայն տրվող պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
5) արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
6) արժեթղթերի քանակը,
7) միավորի գինը,
8) ընդհանուր ծավալը,
9) հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումները (առկայության դեպքում),
10) ներդրումային որոշման կայացման ճշգրիտ ժամանակը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն,
11) ներդրումային որոշումը կայացնող աշխատակցի անունը, ազգանունը:

15.3. Ներդրումային որոշումների գրանցամատյանը Փաթեթի կառավարչի կողմից վարվում է էլեկտրոնային ձևով:

15.4. Ներդրումային որոշումների հիման վրա կազմված պատվերներ տրամադրելիս Փաթեթի կառավարիչն առաջնորդվում է Ընկերության «Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման» գործող կանոններով սահմանված պատվերների կատարման քաղաքականությամբ:

16. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

16.1. Սույն Կանոնակարգով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են Օրենքով, ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Ընկերության «Արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման» կանոններով սահմանված կարգով:

16.2. Սույն Կանոնակարգի փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից և ուժի մեջ են մտնում հաստատվելուց անմիջապես հետո:

Հավելված 1

«Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ
Գործադիր տնօրեն՝
պրն._____

Դիմում

Հայտնում եմ Ձեզ, որ անձնական պատճառներից ելնելով ցանկություն ունեմ արժեթղթերի փաթեթի կառավարման FCM/ԱՓԿ N ___ պայմանագրով կառավարմանը հանձնված Ակտիվների որոշ մասը՝ _____ (գումարը նշել թվով և բառերով) ՀՀ դրամի (ԱՄՆ դոլարի և/կամ այլ արժույթի)[1] չափով դուրս բերել կառավարումից: Խնդրում եմ տեղեկացնել ինձ վերոնշյալ գործառնության իրականացման հնարավորության և ժամկետների մասին:

Իմ բանկային վավերապայմաններն են.

Բանկի անվանումը՝

հ/հ՝

դեպո հ/հ՝

Հաճախորդ _____/անուն, ազգանուն/
ստորագրություն

«____» «_____» _____թ.

ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՆՇՈՒՄՆԵՐ

Դիմումն ընդունված է (օր/ամիս/տարի)

Դիմումն ընդունողի անունը, ազգանունը և ստորագրությունը

[1] Եթե Հաճախորդը ցանկանում է կառավարումից դուրս բերել արժեթղթերի որոշ մասը, ապա սույն դիմումում պետք է նշվի դուրսբերման ենթակա արժեթղթերի թողարկողի անվանումը, արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (թողարկման համարը) և արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը):

Հավելված 2

ԴԻՄՈՒՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

Հաճախորդի տվյալներ

անունը, ազգանունը և անձնագրային տվյալները
բնակության վայրը և հեռախոսահամարը

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ձեր կողմից (օր/ամիս/տարի) «Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ ներդրումային ընկերությանը (այսուհետ՝ Փաթեթի կառավարիչ) ներկայացված դիմումը բավարարվում է, և Ձեր կողմից հայցված Ակտիվների՝ _____ (գումարը նշել թվով և բառերով, արժեթղթերի դեպքում նշել արժեթղթերի թողարկողի անվանումը, արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (թողարկման համարը) և արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը)) ՀՀ դրամի (ԱՄՆ դոլարի և/կամ այլ արժույթի) չափով դուրսբերումը կառավարումից հնարավոր կլինի իրականացնել _____ ընթացքում:

Ֆինանսական շուկայի և Հաճախորդի Ակտիվների ու Պարտավորությունների համառոտ նկարագրություն՝

Կառավարչի տվյալները և կապի միջոցները՝

Դիմումի պատասխանի վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում Դուք կարող եք դիմել Կառավարչին:

Կառավարիչ _____ /անուն, ազգանուն/
ստորագրություն

Փաթեթի կառավարչի
գործադիր տնօրեն _____ /անուն, ազգանուն/
ստորագրություն

Կ.Տ.

«____» «_____» ____ թ.

Հավելված 3

ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

ք. Երևան «____» «_____» ____թ.

Համաձայն արժեթղթերի փաթեթի կառավարման FCM/ԱՓԿ N __ պայմանագրի, Կառավարման

Հիմնադիրը՝ _____
(Ա.Ա.Հ. և անձնագրային տվյալներ (եթե իրավաբանական անձ է, ապա կազմակերպության անվանումը և լիազորված անձի Ա.Ա.Հ.-ն և անձնագրային տվյալները))

ի դեմս _____, հանձնում/ընդունում է, իսկ
լիազորված անձի Ա.Ա.Հ.-ն և անձնագրային տվյալները

Փաթեթի կառավարիչ հանդիսացող «Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ-ն՝ ի դեմս գործադիր տնօրեն Արեն Հակոբյանի, որն առաջնորդվում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և դրանից բխող այլ նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև Փաթեթի կառավարչի կանոնադրությամբ, ընդունում/հանձնում է հետևյալ Ակտիվները՝ 1. արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցներ՝_____ ՀՀ դրամի չափով

2. արժեթղթեր՝

N	Թողարկողի անվանումը	Արժեթղթի տեսակը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (թողարկման համարը)	Քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը)	Շուկայական արժեքը (ՀՀ դրամ)

Ընդհանուր շուկայական արժեքը ՀՀ դրամով՝ _____

Փաթեթի կառավարիչ

«Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ
ՀՀ, 0010 ք. Երևան, Բյուզանդի 1, տարածք 50
ՀՎՀՀ՝ 00090674
h/h 1510001932101300
Գործադիր տնօրեն

Ա. Հակոբյան _____

Կ. Տ.

Կառավարման Հիմնադիր

անուն, ազգանուն
հասցե
անձնագրային տվյալներ
h/h
կապի միջոցներ

_____

Հավելված 4

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ N

ք. Երևան «____ » «_____» ____թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Ներդրումային Հայտարարագիրը (այսուհետ՝ Հայտարարագիր) սահմանում է Փաթեթի Կառավարչին հանձնված Կառավարման հիմնադրի (այսուհետ՝ Հիմնադիր) Ակտիվների ներդրման նպատակը, ուղղությունները և ներդրումային պորտֆելի կառուցվածքը:

2. ՆԵՐԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Հիմնադրի Ակտիվների ներդրման նպատակն է արժեթղթերի պորտֆելի ձևավորումը և/կամ կառավարումը՝ ուղղված պորտֆելի արժեքի բարձրացմանը:

3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

3.1 Սույն հայտարարագրի գործողության ժամկետը սահմանվում է մինչև «____» «_____» _____թ.:

4. ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1 Փաթեթի կառավարիչն իրեն հանձնված Ակտիվները կարող է ներդնել հետևյալ ֆինանսական գործիքներում՝

- Բաժնետոմսեր, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթղթեր
- Ներդրումային ֆոնդերի փայեր
- Պետական պարտատոմսեր
- Պետական և կորպորատիվ եվրոպարտատոմսեր
- Դեպոզիտար ստացականներ
- Կորպորատիվ պարտատոմսեր և պարտքային այլ արժեթղթեր
- Ածանցյալ գործիքներ
- Այլ գործիքներ

4.2 Ակտիվների կառուցվածքը, որը Փաթեթի կառավարիչը պետք է պահպանի արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի ողջ ժամանակի ընթացքում՝

Ա. Պորտֆելի կառուցվածք

☐ դրամական միջոցներ _____%

☐ արժեթղթեր _____%

Բ. Դրամական միջոցներ

☐ ՀՀ դրամ _____%

☐ ԱՄՆ դոլար _____%

☐ Եվրո _____%

☐ Այլ արժույթ _____%

Գ. Արժեթղթեր

☐ բաժնետոմսեր _____%

☐ պետական պարտատոմսեր _____%

☐ կորպորատիվ պարտատոմսեր _____%

☐ այլ արժեթղթեր _____%

4.3 Հայտարարագրի 4.1 կետով սահմանված ֆինանսական գործիքների ժամկետայնության որևէ սահմանափակում չի սահմանվում:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Այն դեպքում, երբ Ակտիվների շուկայական գնի փոփոխությունը հանգեցնում է Հայտարարագրով սահմանված պայմանների անհամապատասխանության, Փաթեթի Կառավարիչը պարտավոր է Ակտիվների կառուցվածքը համապատասխանեցնել Հայտարարագրով սահմանվածին առավելագույնը 1 ամսվա ընթացքում:

5.2 Արժեթղթերի շուկայական արժեքի գնահատումը կատարվում է ՀՀ դրամով: Արտարժույթով գնանշվող արժեթղթերի շուկայական արժեքը որոշվում է գնահատման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Արժեթղթերի իրական (շուկայական) արժեքի որոշման մեթոդներն են՝

ա. ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսերի համար արժեթղթի շուկայական արժեքը հաշվարկվում է հիմք ընդունելով եկամտաբերության կորը,

բ. Կարգավորվող շուկայում ցուցակված արժեթղթերի շուկայական արժեքը հաշվարկվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ այդ արժեթղթերով բորսայում հաստատված վերջին գործարքի գին կամ եկամտաբերություն (փակման գին կամ եկամտաբերություն), եթե գործարքի ամսաթվի և հաշվետու ամսաթվի միջև ժամկետը չի գերազանցում մեկ ամիս:

գ. Այն արժեթղթերի համար, որոնցով կարգավորվող շուկայում գործարքներ չեն իրականացվել կամ վերջին գործարքն իրականացել է ավելի քան մեկ ամիս առաջ, սակայն որոնց համար առկա է շուկա ստեղծող (մարքեթ մեյքեր), շուկայական արժեքը հաշվարկվում է հիմք ընդունելով շուկա ստեղծողի կողմից առաջարկվող տվյալ արժեթղթի գնանշումները: Ընդ որում, երկար դիրքի հաշվարկի ժամանակ հիմք է

ընդունվում այն գինը կամ եկամտաբերությունը, որով արժեթուղթը կարող է վաճառվել, իսկ կարճ դիրքի հաշվարկի ժամանակ՝ այն գինը կամ եկամտաբերությունը, որով տվյալ արժեթուղթը կարող է գնվել:

դ. Այն պարագայում, երբ արժեթղթերի համար կիրառելի չեն շուկայական արժեքի հաշվարկման՝ սույն կետի «ա» - «գ» պարբերություններով սահմանված եղանակները, այսինքն՝ եթե գնանշված շուկայական գինն առկա չէ, այդ դեպքերում արժեթղթերը գնահատվում են հաճախորդի հետ համաձայնեցված մեթոդով՝ գնային մոդելների, զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի, ինչպես նաև շուկայական գնի հաշվարկման համար նպատակահարմար կամ գործնական համարվող այլ մեթոդների միջոցով:

5.3 Իմաստալից հենանիշ է սահմանվում _____:

6. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փաթեթի կառավարիչ	Կառավարման Հիմնադիր
«Ֆյուչր Կապիտալ Մարկետ» ՍՊԸ	անուն, ազգանուն
ՀՀ, 0010 ք. Երևան, Բյուզանդի 1, տարածք 50	հասցե
ՀՎՀՀ՝ 00090674	անձնագրային տվյալներ
h/h 1510001932101300	h/h
Գործադիր տնօրեն	կապի միջոցներ
Ա. Հակոբյան _____	_____
Կ. Տ.	

Հավելված 5

«Ֆյուչր կապիտալ մարկետ» ՍՊԸ կողմից փաթեթի կառավարման ծառայությունների մատուցման դիմաց Կառավարման հիմնադրից գանձվող պարգևավճարի[2] հաշվարկման կարգ

Պարգևավճարը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրվա և/կամ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի դադարեցման օրվա դրությամբ, հետևյալ բանաձևով՝

$$F = \sum_{i=1}^{D} \frac{AV_i}{D} * P\%$$

, որտեղ

F – Պարգևավճարն է,

AV – Կառավարմանը հանձնված Ակտիվների համախառն շուկայական արժեքն է՝ հաշվետու ժամանակաշրջանի i-րդ օրվա վերջում[3] (ՀՀ դրամով[4]),

D – Հաշվետու ժամանակաշրջանի օրերի քանակը,

P – Տարեկան տոկոսադրույքի (մինչև 10%) մեկ տասներկուերորդ մասը:

---

[2] Պարգևավճարը չի ներառում «Ֆյուչր կապիտալ մարկետ» ՍՊԸ կողմից կատարված՝ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրին առնչվող բոլոր այլ անհրաժեշտ ծախսերը:

[3] Առաջին անգամ պարգևավճարի հաշվարկման ժամանակ հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը համընկնում է արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի շրջանակներում Ակտիվների առաջնային մուտքի ամսաթվի հետ:

[4] Արտարժույթով արտահայտված Ակտիվները հաշվարկին մասնակցում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից համապատասխան օրվա համար հրապարակված՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Հավելված 6
(ներդրումային ընկերության հաճախորդին տրվող հաշվետվություն)

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

_____
Փաթեթի կառավարչի անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը

_____
Կառավարման հիմնադրի անունը, ազգանունը (անվանումը) և վերջինիս արժեթղթերի կառավարման նպատակով բացված հաշվի նույնականացնող համարը

__ / __ / ____
հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը (օր/ամիս/տարի)

__ / __ / ____
հաշվետու ժամանակաշրջանի վերջը (օր/ամիս/տարի)

Աղյուսակ 4.1. Փաթեթում ընդգրկված արժեթղթերի ցանկը և փաթեթի արժեքը

Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում		
Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիր	Անվանական արժեք/ Քանակ (ՀՀ դրամ/հատ)	Իրական արժեք (ՀՀ դրամ)
ԸՆԴԱՄԵՆԸ		

Հաշվետու ժամանակաշրջանի վերջում		
Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիր	Անվանական արժեք/ Քանակ (ՀՀ դրամ/հատ)	Իրական արժեք (ՀՀ դրամ)
ԸՆԴԱՄԵՆԸ		

Աղյուսակ 4.2. Փաթեթի կառավարման եկամտաբերության համեմատումը հենանիշի հետ

Հենանիշի անվանումը	Հենանիշի տարեկան եկամտաբերություն (%)	Հենանիշի և փաթեթի տարեկան եկամտաբերությունների տարբերություն
Փաթեթի տարեկան եկամտաբերություն (%)		
Արժեթղթերի փաթեթի տարեկան եկամտաբերությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում		

Հավելված 6
(ներդրումային ընկերության հաճախորդին տրվող հաշվետվություն)

Աղյուսակ 4.3. Դրամական միջոցների հաշվեկշիռ

Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում (ՀՀ դրամ)	
Ընդամենը մուտքեր (այդ թվում)՝	
Հիմնադրի կողմից կատարված համալրումներ	
Կատարված գործարքներից ստացված եկամուտներ	
Ստացված շահութաբաժիններ, տոկոսներ և այլ վճարներ	
Ընդամենը ելքեր (այդ թվում)՝	
Հիմնադրի կողմից կատարված դուրսհանումներ	
Գանձումներ գործառնական ծախսերի դիմաց	
Կառավարչի պարգևավճար	
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում (ՀՀ դրամ)	

Ակտիվի անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	Հաշվետու ժամանակաշրջանի վերջում
Դրամական միջոցներ, այդ թվում՝		
ՀՀ դրամ		
ԱՄՆ դոլար		
Եվրո		
Այլ արժույթ		

Աղյուսակ 4.4. Արժեթղթերի փաթեթում ներառված արժեթղթերի գծով կորպորատիվ գործողություններ

Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիր	Ամսաթիվ	Գործողության անվանումը

Աղյուսակ 4.5. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գանձվող վճարներ

Հաշվետու ժամանակաշրջանում գանձվող վճարներ (ՀՀ դրամ), այդ թվում՝	
փաթեթի կառավարման դիմաց գանձվող վճար (ՀՀ դրամ)	
գործարքների կնքման համար կատարված ծախսեր (ՀՀ դրամ)	

Աղյուսակ 4.6.
Ստացված շահութաբաժիններ, տոկոսներ և այլ վճարներ

Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիր	Եկամտի տեսակ	Ամսաթիվ	Մուտքի չափ (ՀՀ դրամ)

Գործադիր տնօրեն՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«____» «_____» _____թ.

Հավելված 7
(ներդրումային ընկերության հաճախորդին տրվող հաշվետվություն)

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում կնքված գործարքի վերաբերյալ

_____
Փաթեթի կառավարչի անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը

_____
Կառավարման հիմնադրի անունը, ազգանունը (անվանումը)

_____
Գործարքի կնքման վայրը

N	Ներդրումային որոշման մեջ նշված գործարքի տեսակը (առք, վաճառք)	Ներդրու-մային որոշման համաձայն տրված պատվերի տեսակը և բնույթը	Գործարքի կնքման ամսաթիվը (տարի/ամիս/օր/)	Գործարքի կնքման ժամը (ժամ/րոպե)	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը)	Գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը)	Մեկ արժեթղթի գինը	Գործարքի ընդհանուր ծավալը	Գանձված միջնորդավճարի համախառն գումարը	Հաճախորդի կողմից վճարումներր կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին նա նախօրոք չի տեղեկացվել	Նշում, եթե գործարքի մյուս կողմը հանդես է եկել Փաթեթի կառավարիչը, վերջինիս խմբի մեջ մտնող որևէ անձ, կամ Փաթեթի կառավարչի մեկ այլ հաճախորդ, բացառությամբ եթե գործարքն իրականացվել է այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար

Գործադիր տնօրեն՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«____» «_____» _____թ.